

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԷ ԾՆԱԾ ԱՊՊԱՍԵԱՆ ԽԱԼԻՖԱՆԵՐ

Բնչպէս յայտնի է, Օմմավիներու իշխանութեան անկումէն յետոյ ամիրապետութեան մականը անցաւ Ապպասներուն ձեռքը, որոնք իւրացուցին անհետացող հարստութենէն ժառանգ մնացած լայնածաւալ երկիրները: Նորահաստատ հարստութեան հիմնադիրը՝ Ապու Ապպաս փրկչական 750 թուականին խալիֆա հռչակուեցաւ Իրաքի Քուֆէ կոչուած քաղաքին մէջ և վտանգաւոր մրցակիցներու դուռերէն միանգամ ընդ միշտ ազատուելու նպատակով սրէ անցընել տուաւ Օմմավի գերդաստանին աչքի զարնող ներկայացուցիչները:

Ասոր յաջորդը՝ Մանսուր խալիֆան հիմը դրաւ Պաղտատ քաղաքին և հոն փոխադրեց արաբական կայսրութեան մայրաքաղաքը: Մինչեւ 861 իրարու յաջորդող խալիֆաներ՝ Մէհտի, Հէտի, Հարուն էր Բաշիտ, Էմին, Մէհմուն և Միւթէվէքքիլ արշաւախուժները զրկեցին աջ ու ձախ, և հետամուտ եղան կայսրութեան սահմաններն ընդլայնելու:

Ապպասեան ռազմապաշտութեան ահարկու հարուածներէն ազատ չմնաց նաեւ Հայաստան, որու վրայ կարգուած արար ոստիկաններ յաճախ առիթ ստեղծեցին ահ ու սարսափ տարածելու համար օտար լուծին ենթարկուած երկրին մէջ: Արաբ մատենագիրներ կը վկայեն, օրինակ, թէ 851 թուականին Միւթէվէքքիլ խալիֆայի օրով Հայաստան զրկուած Եռուսեփ Պին Ահմէտ անուն ոստիկան մը շղթայի զարկած և աւերապետին զրկած է հայոց Բագարատ Պին Աշոտ պատրիկը (իմա Տարօնի իշխան Բագարատ Բագրատունին): Այս ցաւառիթ միջադէպը պատճառ եղած է, որ պառակտուած հայ նախարարներ պահ մը միարանին և կատաղի գրոհով մը սրէ անցընեն

ոստիկան Եռուսեփն ու անոր բանակին մէկ մասը: Գերի ինկող արար զինուորներն ալ մերկացուելէ ետք ենթարկուած են Հայաստանի ահաւոր ցուրտին և բուքին:

Այս յանդուգն վրիժառութեան տեղեկանալով՝ Միւթէվէքքիլ զինուորական մեծ ուժերով Հայաստան զրկած է Պուղա անուն գաղանարարոյ հրամանատար մը, որ երկրի ժողովուրդէն 30 հազար հոգի ջարդելէ և անհամար բազմութիւն մը գերի վարելէ ետք՝ անցած է Թիֆլիս, զոր կրակի տուած է 50 հազար բնակիչներովը միասին:

Արդար ըլլալու համար պէտք է սակայն խոստովանիլ, որ վերեւ յիշատակուած խալիֆաներն և մինչեւ Թ. դարու վերջերը անոնց յաջորդող գահակալներ քաջալեր հանդիսացան ուսման, և գիտութիւնը ծաղկեցուցին Ապպասներու մայրաքաղաքին մէջ: Ահնարկուած ամիրապետներու օրովն էր արդարեւ, որ արաբերէնի թարգմանուեցան յունական, պարսկական, ասորական և հնդկական զարուծութիւններու աչքի զարնող մատենաները և Պաղտատ քաղաքը ժամադրաւորաբար դարձաւ մեծանուն բանաստեղծներու և հեղինակաւոր գիտնականների:

Ապպասեան իշխանութեան այս յարաճուն վերելքը իր գագաթնակէտին հասաւ Թ. դարու վերջին քառորդին, երբ ձեռք բերուած զինուորական յաջողութիւններով ընդարձակ կայսրութեան սահմանները հասած էին մէկ կողմէն մինչեւ Հնդկաստան և միւս կողմէն մինչեւ Ափրիկէի խորերը:

Այնուհետեւ ծայր տուաւ անկումի շրջանը, երբ հաճոյքի սիրահար խալիֆաներ հեռացնէին մոռցան խալիֆան խոստմբեր բարքերը և գինիի ու բարոյական ապակա-

նութեան մէջ փնտուցին յաղթութեան դափնին...: Օգտուելով կեդրոնի թուլութենէն՝ ծայրագաւառները մէկիկ մէկիկ անջատուեցան Պաղտատի իշխանութենէն, մինչեւ որ Ապպասներու Սիւլեյի խալիֆայութեան աւերներ Գաթիմներու Շիի խալիֆայութիւնը հաստատուեցաւ Եգիպտոսի մէջ 969ին:

Ապպասեան կայսրութեան վերջնական կործանումը տեղի ունեցաւ 1258ին, երբ մանկոյններուն թագաւորը Հուլայոյ (Հուլախան) Պաղտատը գրաւելէ ետք՝ մահացուց Մուսթաքմ Պիլլահ խալիֆան, ջարդեց մայրաքաղաքին բնակչութիւնը և դարաւոր զոհողութիւններու գնով ձեռք բերուած արարական զարուծեան հոյակապ հատորներն ալ յանձնեց Տիգրիսի ալիքներուն...:

Ապպասեան հարստութիւնը տեւեց 508 տարի և տուաւ 37 խալիֆաներ:

Ապպասեան կայսրութեան կեանքը շօշափող այս չափազանց համառօտ տեղեկատուութեան մէջ մեղի համար հետաքրքրական է սա պարագան, որ վերեւ յիշատակուած 37 խալիֆաներէն առնուազն 3ը՝ ըստ արար մատենագիրներու վկայութեան՝ ծնած են հայ մայրերէ, որոնք այս կերպով հայուն արիւնը խառնած են Ապպասներու մեծ գերդաստանին:

Ահնարկուած հայուհիներէն առաջինն է Գարր Էն Նատա (Շաղաշիթ) և ըստ ոմանց Պետր Էտ Տուճա (Գիշերներու Լիալուսին) կամ Ալիմ (Գրօշակ) անուն ճորտուհի մը, որ պահ մը Գատիի Պիլլահ խալիֆայի կանանցին զարդը կաղմելէ ետք՝ հիճրէթի 391 (Ք. 1001) թուականին՝ ծնունդ տուած է Գայիմ Պիլմիրիլահ խալիֆային: Իր գեղեցկութեամբն ու քաջասրտութեամբը նշանաւոր այս հայուհին պայքարած է իր զաւ-

կին թշնամիներուն դէմ, որոնք պահ մը բանտարկած են զինքը:

Խնդիրն այն է, որ հիճ. 451 (Ք. 1060) թուականին Պաղտատի զինուորական հրամանատարներէն Պասասիրի պահ մը ապստամբեցաւ Ապպասեան խալիֆային դէմ, գրաւեց մայրաքաղաքը, փորձեց Գաթիմի ամիրապետին իշխանութեան ենթարկել զայն և Գայիմ Պիլմիրիլահի պատկանող վերարկուն, փաթթոցը և անոր իբրեւ գահ ծառայող նշանաւոր վանդակապատը (շուպպա) Գահիրէ փոխադրեց: Գայիմ ստիպուեցաւ փախչիլ մայրաքաղաքէն, բայց քիչ յետոյ Պաղտատ հասաւ սեւճուգ Տուգրիլ Պէյ, որ սպաննեց Պասասիրին և իր պաշտօնին վերադարձուց Գայիմ խալիֆան: Այս արիւնոտ պայքարներուն մասնակցեցաւ խալիֆային հայազգի մայրը, որ Պասասիրիի ձեռքը իյնալով բանտարկուեցաւ: Այս բանտարկութիւնը, սակայն, կարճատեւ եղած է, որովհետեւ Պասասիրի իր սպանութենէն առաջ ոչ միայն ազատ արձակած է խնդրոյ առարկայ հայուհին, այլ բնակութեան համար պալատ մը յատկացուցած և նոյնիսկ թոշակ կապած է անոր:

Այս նշանաւոր հայուհիին մասին հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կը հաղորդէ Թադրիպիրտի ⁽¹⁾ իր հոյակապ պատմագիրքին մէջ, (հատ. Ե. էջ 67).

«... Նոյն տարին (իմա հիճ. 452, Ք. 1061) թուականին մեռաւ Ապպասեան Գայիմ Պիլմիրիլահ խալիֆային մայրը, որ հայ ճարիա մըն էր Գաթիլէն Նատա և ըստ ոմանց Պէտր Էտ Տուճա կամ Ալիմ անունով: Երբոր Պաղտատը գրաւեց, Պասասիրի բանտարկեց այս կինը: Անոր մահը տեղի ունեցաւ Պաղտատի մէջ Բէճէպ ամսուն և անոր վրայ աղօթեց (իմա թաղմանական աղօթքը

⁽¹⁾ Ճէմալէտտին Թադրիպիրտի Ժ. Ե. դարու մատենագիր մըն է՝ ծագումով թուրք, որ զրի առած է պատմութեան և ականաւոր ղէմքերու կենսագրութեան նուիրուած բազմաթիւ գործեր: Նշանաւոր է մանաւանդ Էն Նիճնուլ եղ Զաֆրա Ֆի Միշուքի Մըսր Վիլ Գաֆիրա (Փայլուն Աստղեր Մըսրի և Գահիրէի Իշխանաւորնե-

րուն մէջ) անուն 11 հատորներէ բաղկացած ընդարձակ պատմագիրքը, որուն 9 հատորները միայն հրատարակուեցան ցարդ: Հեղինակին իրական անունն է Թանրը Վէրտի (Աստուածատուր), որ հետզհետէ աղաւաղուելով արար գրական աշխարհին մէջ վերածուած է Թադրիպիրտի:

